ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

21 հուլիսի 2023 թվականի թիվ 76-Ա

ք.Երևան

«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ
ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2023 թվականի հուլիսի 3-ին, դիմումի հիման վրա հարուցված թիվ 3 վարչական վարույթի նյութերը՝ պարզեց.

Հանձնաժողով մուտքագրված «ՍՈԼԻԴ ՓԱՐԹՆԵՐ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) դիմում-գանգատում նշված է տեսալսողական մեդիածառայություն մատուցող «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Հեռարձակող) «Կենտրոն» տեսալսողական ծրագրի կողմից ոչ սեփական տեսալսողական հաղորդումն (Ֆիլմը) առանց դրա հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի հեռարձակելու փաստի վերաբերյալ:

Ըստ Ընկերության դիմում-գանգատի՝ Հեռարձակողի կողմից «Կենտրոն» հեռուստաընկերության եթերում սույն թվականի մայիսի 3-ին և 17-ին ցուցադրվել է «ОГРАБЛЕНИЕ НА БЕЙКЕР-СТРИТ» ֆիլմը (այսուհետ՝ նաև Ֆիլմ), որի ցուցադրման բացառիկ իրավունքը Հայաստանի Հանրապետության տարածքում պատկանում է «Սոլիդ Փարթներ» ՍՊ ընկերությանը: Ընկերությունը հայտնել է նաև, որ իր և Հեռարձակողի միջև վերոնշյալ ֆիլմի հեռարձակման իրավունքի տրամադրման լիցենզիոն պայմանագիր կնքված չէ, որը թույլ կտար վերջինիս հեռարձակել Ֆիլմը Հայաստանի Հանրապետության տարածքում, իսկ Ընկերությունը կրում է պայմանագրային պարտավորություն իրավատիրոջ հանդեպ՝ իր իրավունքները երրորդ անձանց խախտումներից պաշտպանելու ուղղությամբ:

Ընկերությունը որպես ապացույց ներկայացրել է **2021 թվականի հունվարի 11-ին**՝ «Մաուրիս Ֆիլմ» ՍՊ և «Սոլիդ Փարթներ» ՍՊ ընկերությունների միջև կնքված լիցենզիոն պայմանագիրը, ինչպես նաև **2023 թվականի փետրվարի 6-ին** կնքված լրացուցիչ համաձայնագիրը:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով և հիմք ընդունելով Ընկերության դիմում-գանգատը՝ 2023 թվականի հուլիսի 3-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ և հարուցված վարչական վարույթի մասին 2023 թվականի հուլիսի 4-ին, թիվ Ե/07/390-23 գրությամբ ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Հեռարձակողը, 2023 թվականի հուլիսի 4-ին, թիվ 79 գրությամբ, Հանձնաժողով է ներկայացրել նշված վարչական վարույթի վերաբերյալ իր պարզաբանումը, նշելով, որ «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲ ընկերությունը «ОГРАБЛЕНИЕ НА БЕЙКЕР-СТРИТ» ֆիլմի ցուցադրման իրավունքը ձեռք է բերել «Ֆիլմ Հաուս» ՍՊ ընկերությունից, որի վերաբերյալ կնքվել է պայմանագիր և որպես ապացույց ներկայացրել է 2023 թվականի հունվարի 31-ին կնքված թիվ 01/23 պայմանագրի և թիվ 01 հավելվածի պատճենները:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությամբ, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենքը, «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», **«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին»,** «Լեզվի մասին», «Գովազդի մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, կարգավորող պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:»

Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

«Ոչ սեփական տեսալսողական հաղորդումները կարող են հեռարձակվել միայն դրանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության դեպքում:»

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Այլ անձինք ստեղծագործությունը կարող են օգտագործել միայն ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքները կրող անձի (ստեղծագործության հեղինակ կամ այլ անձ, որին այդ իրավունքներն անցել են օրենքով սահմանված կարգով, այսուհետ՝ իրավատեր) թույլտվությամբ՝ հեղինակային պայմանագրի հիման վրա, եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

Նույն օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սույն օրենքով պահպանվող ստեղծագործության կամ դրա էական մասի կամ հարակից իրավունքների օբյեկտի ցանկացած օգտագործում անօրինական է, **եթե նախապես, մինչև նման օգտագործումը ձեռք չի բերվել հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատիրոջ թույլտվությունը:**

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է վարչական վարույթի վերաբերյալ Ընկերության կողմից դիմում-գանգատի հետ ներկայացված հիմնավորումները և Հեռարձակողի կողմից հարուցված վարչական վարույթի վերաբերյալ ներկայացված պարզաբանումներն ու փաստարկները, մասնավորապես՝

Ընկերության կողմից ներկայացրած փաստաթղթերից հետևում է, որ «Սոլիդ Փարթներ» ՍՊ ընկերությունը «ОГРАБЛЕНИЕ НА БЕЙКЕР-СТРИТ» ֆիլմի ցուցադրման իրավունքը ձեռք է բերել 2023 թվականի փետրվարի 6-ին կնքված լրացուցիչ համաձայնագրի հիման վրա (որն հանդիսանում է 11.01.2021 թվականին կնքված լիցենզիոն պայմանագրի լրացում), և համաձայն նշված համաձայնագրի՝ ֆիլմի ցուցադրման իրավունքը գործում է 2023 թվականի մայիսի 1-ից մինչև 2025 թվականի ապրիլի 30-ը:

Ըստ Հեռարձակողի կողմից ներկայացված 2023 թվականի հունվարի 31-ին կնքված թիվ 01/23 պայմանագրի (ինչպես նաև թիվ 1 հավելվածի), հետևում է, որ «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲ ընկերության կողմից «ОГРАБЛЕНИЕ НА БЕЙКЕР-СТРИТ» ֆիլմի ցուցադրման իրավունքը գործում է 2023 թվականի փետրվարի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը:

Վերոգրյալից հետևում է, որ «Կենտրոն» հեռուստաընկերության եթերում սույն թվականի մայիսի 3-ին և 17-ին «ОГРАБЛЕНИЕ НА БЕЙКЕР-СТРИТ» ֆիլմը ցուցադրվել է հենց այս 2023 թվականի հունվարի 31-ին կնքված թիվ 01/23 պայմանագրի հիման վրա, այսինքն Հեռարձակողի կողմից չի խախտվել Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները:

Փաստենք նաև, որ Հեռարձակողը 2022 թվականի դեկտեմբերի 24-ից հանդիսանում է Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

Այսպիսով, հաշվի առնելով այն փաստը, որ Հեռարձակողի կողմից ոչ սեփական տեսալսողական հաղորդումը՝ Ֆիլմը հեռարձակվել է դրա հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայությամբ, ուստի վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայության հիմքով Հեռարձակողի նկատմամբ հարուցված թիվ 3 վարչական վարույթը ենթակա է կարճման:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝

1) վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայությունը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) վարչական տույժ նշանակելու մասին.

2) գործի վարույթը կարճելու մասին:

Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է բանավոր դիտողություն հայտարարելու, նյութերը ընկերական դատարանի, ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծված՝ հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովի, հասարակական կազմակերպության կամ աշխատավորական կոլեկտիվի քննությանը հանձնելու կամ դատախազին, նախաքննության կամ հետաքննության մարմնին հանձնելու դեպքում, ինչպես նաև սույն օրենսգրքի 247 հոդվածով նախատեսված հանգամանքների առկայության դեպքում:

«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքի 66-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատերն իր իրավունքները պաշտպանելու նպատակով կարող է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել դատարան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետի, 282-րդ հոդվածի դրույթները՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1.«ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲ ընկերության նկատմամբ հարուցված թիվ 3 վարչական վարույթը կարճել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3.Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Տ.ՀԱԿՈԲՅԱՆ

21 հուլիսի 2023թ.
ք.Երևան